

Առաջարկ

«Կրթական օբյեկտների հիմնանորոգում» պետական ծրագրի 2014-2016 թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերում ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հանրակրթական դպրոցների կրթական օբյեկտների հիմնանորոգումն ընդգրկելու

1. Կրթահամալիրի Ավագ դպրոց-վարժարանի կրթական օբյեկտ – հասցեն՝ Ա. Բարաջանյան 25

Ավագ դպրոց-վարժարանը գործում է 1984թ. կառուցված 1500 սովորողի համար նախատեսված 11500 քառ.մ. մակերեսով տիպային դպրոցի շենքում: Շենքը գործում է որպես կրթահամալիրի Մայր դպրոց, որից օգտվում են կրթահամալիրի բոլոր սովորողները, ուսուցիչները, ծնողները: Շենքում, բացի 7-12-րդ դասարանցիներից, սովորում են կրթահամալիրի պետական քոլեջի ուսանողները, երաժշտության, պարի, մարզական, տեխնիկական ստեղծագործության, թատերական դպրոցների սաները: Շենքում են գտնվում կրթահամալիրի գրադարանը, բնագիտության կենտրոնը, դահլիճները: Շենքը հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքի տանիքի հարթ հատվածի կաթոցները խափանում են ուսումնական բնականոն գործունեությունը: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքի հարթ հատվածը, փոխել պատուհանները, շենքի ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

2. Կրթահամալիրի Արհեստագործական ավագ դպրոցի կրթական օբյեկտ – հասցեն Զ. Անդրանիկի 92/1

Արհեստագործական ավագ դպրոցը գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 4200 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Արհեստագործական ավագ դպրոցի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 260 9-12-րդ դասարանցիներ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական 1-ամյա ծրագրով 40 ուսանողներ: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

3. *Կրթահամալիրի Չեղարվեստի ավագ և կրտսեր դպրոցների կրթական օբյեկտ – հասցեն՝ Ռաֆֆու 69/1*

Չեղարվեստի ավագ և կրտսեր դպրոցները իրենց ցուցասրահ-մեդիակենտրոնով (հասցեն՝ Ռաֆֆու 57) գործում են 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 4200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում, ցուցասրահ-մեդիակենտրոնը տեղավորված է կրթական օբյեկտի հարևանությամբ գտնվող բնակելի շենքի 1100 քառ. մ. բացվածքում: Շինությունները մեր ուժերով հարմարեցվել են Չեղարվեստի դպրոցի կարիքներին, հիմնանորոգման չեն ենթարկվել: Շենքում սովորում են 270 1-12-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Ֆիզիկապես մաշված թեք տանիքի ազբոշիֆերը անձրևի և ձյան համար ավելի ու ավելի թափանցիկ է դարձել՝ ստեղծելով ոչ հիգիենիկ վիճակ դպրոցում: Անհրաժեշտ է փոխել թեք տանիքը, նորոգել բացվածքի թեք տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շինությունների ողջ ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

4. *Կրթահամալիրի Հիմնական դպրոցի կրթական օբյեկտ – հասցեն՝ Ծ. Իսակովի 52/6*

Հիմնական դպրոցը գործում է 1984թ. կառուցված 12 խմբանոց տիպային 3600 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է Հիմնական դպրոցի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 160 1-9-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Կաթացող հարթ տանիքը փչացնում է դպրոցի գույքը և մանրահատակի ծածկերը: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի կաթացող հարթ տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակ:

5. *Կրթահամալիրի Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզի կրթական օբյեկտ – հասցեն՝ Ա. Բաբաջանյան 38/1*

Բ-4 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզը գործում է 1983թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ.մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին:

Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 270 1-6-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ:

6. Կրթահամալիրի Բ-1 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզի կրթական օբյեկտ – հասցեն՝ Ա. Բաբաջանյան 47/1

Բ-1 թաղ-ի հանրակրթական դպրոց-պարտեզը գործում է 1982թ. կառուցված 14 խմբանոց տիպային 3200 քառ. մ մակերեսով մանկապարտեզի շենքում: Շենքը մեր ուժերով հարմարեցվել է հանրակրթական դպրոց-պարտեզի կարիքներին: Հիմնանորոգման չի ենթարկվել: Շենքում սովորում են 290 1-6-րդ դասարանցիներ: Դպրոցի նախակրթարանում գործում են 2-3 տարեկանների, 3-4 տարեկանների և 4-5 տարեկանների մանկապարտեզային խմբեր: Անհրաժեշտ է հիմնանորոգել շենքի տանիքը, զուգարանները, փոխել պատուհանները, շենքի կես ծավալով կատարել ներքին հարդարման աշխատանքներ, կառուցել բացօթյա մարզահրապարակներ: